1757

Հրանդիր
Քերթողության

012
Հ-83

© National Library of Armenia OCR by Portmind



Հրանտ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

012
Հ-83

© National Library of Armenia

17 JUN 2013

Հեղինակ-կազմող՝ ՍԵԴԱ ԿՈՑԻՆՅԱՆ

Խմբագիր՝ Ա. ԻՍՈՅԱՆ

10153-Ա

Государственная республиканская библиотека Арм. ССР
им. Ал. Мясникяна

Отдел научно-библиографической и справочной работы

ГРАНТ МАТЕВОСЯН

Библиографическая памятка

Автор—составитель: *С. Коцинян*

Редактор: *А. Исоян*

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հրանտ Մաթևոսյանը ծնվել է 1935 թվականին, Թումանյանի շրջանի Ահնիձոր գյուղում։ 1942-ին ընդունվել է տեղի դպրոցը։ 1952—1955 թթ. սովորել է Երևանի 3-րդ արհեստագործական ուսումնարանում։ 1955—1958 թթ. Մաթևոսյանը որպես լինոտիպիստ աշխատել է տպարանում, միաժամանակ գիշերային դպրոցում ավարտել է 10-րդ դասարանը։ 1958 թ. Մաթևոսյանը ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը, ուսանողական տարիներին աշխատել է «Սովետական Հայաստան» թերթում, որտեղ տպագրվել են նրա ակնարկները։ Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատել է «Գրական թերթում», սկզբում որպես սրբագրիչ, հետո՝ բաժնի վարիչ։ Մաթևոսյանը սովորել է Մոսկվայի սցենարիստական բարձրագույն դասընթացներում։

Հրանտ Մաթևոսյանը գրականություն է մտել որպես ակնարկագիր։ Նրա «Տափաստանում» ակնարկը պատմում էր խոպանում աշխատող ուսանողների առօրյայի մասին։ Մաթևոսյանի առաջին ակնարկները իրենց թարմությամբ, գեղարվեստական ինքնատիպ ոճով և թեմայի գերազանց իմացությամբ միանգամից ուշադրություն գրավեցին։ Այդ ակնարկներից արդեն երևում էր, որ գրականություն է մուտք գործել մի արձակագիր, որի ոճի մեջ ներդաշնակորեն միա-

© National Library of Armenia

ձուլված են էպիկականությունը, նուրբ լիրիզմը, հումորն ու խոր դրամատիզմը։

1965 թվականին հայերեն և ռուսերեն լեզուներով լույս է տեսնում «Մենք ենք մեր սարերը» վիպակը, որտեղ հեղինակը մեկ տխրությամբ, մեկ ուրախությամբ պատմում է Անտառամեջ գյուղի մասին։ 1967 թվականին լույս է տեսնում «Օգոստոս» ժողովածուն։ Այդ ժողովածուից մի քանի պատմվածք թարգմանվեց ռուսերեն և լույս տեսավ կենտրոնական մամուլում։ Ահա թե ինչ է գրում Սերգեյ Կրուտիլինը Մաթևոսյանի մասին։ «Նա, ով կկարդա մի ընդհանուր մտքով կապված այս հրաշալի պատմվածքները, կհամաձայնի ինձ հետ, որ նրա հեղինակին մեծ ապագա է սպասվում։ Հրանտ Մաթևոսյանը տիրապետում է գրողի համար պարտադիր բոլոր հատկություններին։ Նա գիտե, թե ինչ պետք է պատմի մարդկանց և կարողանում է պատմել։ («Դրուժբա նարոդով», 1967, № 1, էջ 19)։

Մաթևոսյանը իսկական երևույթ է մեր ժամանակի գրականության մեջ։ Բնությունից օժտված լինելով գրողի անվիճելի տաղանդով՝ նա ծայրագույնս հավատարիմ է մեր գրականության բնապաշտական ավանդներին։

Մաթևոսյանի վիպակներն ու պատմվածքները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով և արժանացել բարձր գնահատականների։

ГРАНТ МАТЕВОСЯН

1935

Грант Матевосян родился в 1935 году, в селе Ахнидзор Туманянского района Арм. ССР. В 1942 году поступил в школу. С 1952 по 1955 год учился в ремесленном училище № 3 города Еревана.

С 1955—1958 гг. работал линотипистом в типографии,

одновременно окончил 10-й класс вечерной школы.

В 1958 году Матевосян поступил в Ереванский педагогический институт. В студенческие годы он работал в редакции газеты «Советакан Айастан» («Советская Армения»), где печатались его очерки.

После окончания института он работал в редакции газеты «Гракан терт» (Лит. газета) корректором, затем заведующим отделом.

В 1965 г. Матевосян стал слушателем Высших сценарных курсов в Москве.

Грант Матевосян вошел в литературу как очеркист. Его очерк «В степи» (1959 г.) рассказывает о студентах, работающих на целине, закаляющихся в труде. Его первые очерки сразу же привлекли к себе внимание необычностью, отличным знанием материала и самобытной художественной формой. Уже по этим очеркам видно, что в литературу пришел талантливый прозаик, в стиле которого гармонически сочетаются эпичность, задушевный лиризм, мягкий юмор и суровый драматизм.

В 1965 году вышел в свет повесть «Мы и наши горы», на армянском и на русском языках. Это рассказ о горной деревне Антарамеч. И весело и грустно рассказывает автор об этом селе, об его людях.

В 1967 г. вышел сборник рассказов «Август». Несколько рассказов из этого сборника были переведены на русской язык и появились в центральной печати.

А вто что пишет о Г. Матевосяне Сергей Крутилин: «Тот кто прочтет эти чудесные рассказы, объединенные единым замыслом, согласится со мной: у их автора большое будущее. Грант Матевосян обладает качествами, обязательными для всякого писателя. У него есть о чем рассказать людям, и он умеет рассказывать» («Дружба народов», 1967, № 1, с. 19).

В 1968 г. в журнале «Советакан граканутюн» вышел

© National Library of Armenia

рассказ «Буйволица», где показан величайший инстинкт природы продолжения рода, самовоспроизведения.

Последные две повести «Мецамор» (1969) и «Хумар» (1970) свидетельствуют о новых, интересных находках писателя. Расширение тематики, само по себе, уже значительно для писателя с определенным опытом.

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ ԿԱՐԴԱԼ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՆՐԱ ՄԱՍԻՆ

Рекомендуем вам прочесть произведения Г. Матевосяна и литературу о нем



ՄԵՆՔ ԵՆՔ, ՄԵՐ ՍԱՐԵՐԸ: [Վիպակ]: Հ. Մաթևոսյան, «Օգոստոս գրքում: Եր., «Հայաստան», 1967, էջ 2—227:

Նույնը՝ Սցենար: Բեմադրող ռեժիսոր՝ Հ. Մալյան: Եր.,

© National Library of Armenia

Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա,
1968, 98 էջ:

Նաև՝—«Սովետական գրականություն», 1965, № 2, էջ
7—48:

*Լեռնաշխարհի գյուղ, իր հնավանդ սովորույթներով, փոք-
րիկ մի աշխարհ, ուր դարավոր պատմություն ունի հողի և
մարդու բարեկամությունը։ Աղնիվ, բարի, շիտակ մարդիկ.
այդ տիպի մարդկանցով է աշխարհը շեն մնում։ Աշխատում
են օրն ի բուն՝ «Անտառամեջը հանդերում է, որովհետև ան-
տառամեջցին ձգտում է հանդերը դարձնել այնպես ավար-
տուն, ինչպես տան մեջ լույս լամպը, սեղանը սփռոցով և
թեյամանը։ Որտեղ աշխատանք կա մարդն այնտեղ է...»
(էջ 87)։*

*Սյուժե՞, համարյա չունի։ «Հովիվների հանրապետությու-
նը», այսինքն 15—20 մարդով (ոչխարատերն էլ հետները)
կերել են «գողացված» երկու ոչխար ու չնայած վճարել են
ոչխարների արժեքը, բայց ըստ իրավաբանական օրենքի՝
դատի են կանչվում։ Այս փոքրիկ, սովորական թվացող պատ-
մության մեջ հեղինակը գեղարվեստորեն պատկերել է մար-
դու և օրենքի, անհատի և հասարակության հարաբերությու-
նը, փոքրիկ գյուղի և դրսի մեծ աշխարհի կապը, թվացող և
իրական հանցանքը։*

*Սրտացավ աչքերով նայելով գյուղին, գյուղում կատար-
վող փոփոխություններին, հեղինակը տագնապ է ապրում,
նա չի ուզում, որ խզվի հողի և մարդու բարեկամությունը, որ
գյուղացին չհեռանա գյուղից, հողից, չէ որ, «եթե բոլորն էլ
օդաչուի պես շուռ գային դեպի աստղերը, և ջրվորը չլսեր
կշտացած հողի թեթև տնքոցը, մեղվապահը չբռներ հեռու
սարափեշերին բացվող նեկտարների բույր՞մը... կլիներ մի
անհա՞մ, անհա՞մ, անվերջ անհա՞մ աշխարհ»։ (էջ 19)։ Նա
գտնում է, որ պետք է վերացնել այն պատճառները, որոնք
ստիպում են գյուղացուն լքել գյուղը, դրա համար անհրա-
ժեշտ է խելացիորեն կազմակերպել գյուղի տնտեսությունը
և եթե այդ տնտեսությունը ապահովի գյուղացու պահանջնե-*

*րը, ապա գյուղացին չի կտրվի գյուղից։ Մաթևոսյանին հա-
ջողվել է սեր արթնացնել դեպի գյուղը, նրա մարդիկ, «լեռ-
ները վերձիգ, կոշտ ու կոպիտ, միանգամից ձորն ընկնող
անդունդներով ու միանգամից վեր սլացող ժայռերով, միան-
գամից շփշփացող անձրևով և կայծակնորեն հանկարծակի
վառվող արեգակով»։ (էջ 107)։*

ԱԼԽՈ: [Պատմվածք]:—Հ. Մաթևոսյան, «Օգոստոս» գր-
քում: Եր., «Հայաստան», 1967, էջ 177—215:

Նույնը՝ «Սովետական գրականություն», Եր., 1966, № 9,
էջ 71—89:

© National Library of Armenia

Կենդանիների մասին ստեղծված պատմվածքների մեջ լավագույններից մեկն է հայ գրականության մեջ։

Ձի է Ալխոն, որին աղվես Գիքորը չափից դուրս ծանրություն բարձած Լոռիից Ղազախ է տանում։ Այս փոքրիկ սյուժեին հեղինակը բարձել է մեծ բովանդակություն։ Ընթերցողը տող առ տող վերլուծելով պատմվածքը, քայլում է Ալխոյի հետ, մտածում աշխարհի ու մարդկանց մասին։ Աշխարհը բարդ է, հակասություններով լի, բայց միևնույն ժամանակ գեղեցիկ, և արժե այդ աշխարհի համար տնքալ ու ապրել, տառապել ու տոկալ։

Մարդացած է Ալխոն, հոգնած, վաստակած, դառնացած, իմաստնացած էակ, որը չնայած մեջքի անասելի բեռին՝ հոգու խորքում երազանքներ, կանաչ մարգագետիններ, հովի պես սուրացող երամակի կարոտ ունի թաքցրած։

Գիքո՞րը։ Նա նույնպես մի բեռնաձի է, բայց անցած կշեռքի ծանր կողմը։ Հեղինակի վարպետությունն այնքան մեծ է, որ կարողանում է նույնիսկ բացասական թվացող հերոսի նկատմամբ համակրանք արթնացնել, որովհետև այդ մարդը աշխատող մարդ է, իսկ աշխարհում շատացել է չաշխատողների թիվը՝ «...բայց ախր էս պետությունն էլ մերը չէ՞. չորս կողմից՝ չեք աշխատում»։

Պատմվածքը կարդացվում է մեծ բավականությամբ, ընթերցողը զգում է բարձր արվեստի հմայքը։

ԿԱՅԱՐԱՆ: [Պատմվածք]:—Հ. Մաթևոսյան, «Օգոստոս» գրքում: Եր., «Հայաստան», 1967, էջ 215—254:

Նույնը՝ «Սովետական գրականություն», Եր., 1967, № 2, էջ 56—76:

«Կայարանը» Հրանտ Մաթևոսյանի ամենահետաքրքիր և ինքնատիպ պատմվածքներից է։ Ինչպես հեղինակի պատմվածքների մեծ մասը, սա նույնպես ունի կենսագրական բնույթ։ Հողը զրկվում է իր մշակողից, գյուղացին ձգտում է քաղաքի համեմատաբար հեշտ թվացող կյանքին։ Ի՞նչ պետք է լինի սրա վերջը։ Մաթևոսյանը գյուղից քաղաք եկած հերոսին նորից գյուղ է վերադարձնում, բայց գյուղը զբաղված է իր առօրյա աշխատանքային հոգսերով, ժամանակ չունի զբաղվելու քաղաքից եկած երիտասարդով։ Երիտասարդը քայլ առ քայլ իջնում է իր ոգեղեն ամրոցից։

Մաթևոսյանի արձակը բացահայտող է, լի սեռուն ըմբռնումներով, ստույգ բնութագրումներով, նուրբ դիտողություններով։

ԳՈՄԵՇԸ: [Պատմվածք]:— «Սովետական գրականություն», Եր., 1968, № 8, էջ 3—23:

© National Library of Armenia

Մաթևոսյանը երդվյալ բնապաշտ է։ Հայ գրականության համար դա նորություն չէ, այն այդպիսին եղել է ի սկզբանե։ Բայց այսօր Մաթևոսյանի բնապաշտությունը ավելի շեշտված է և ունի ծրագրային բնույթ։ Այն ժողովուրդը, որ ապրում էր բնության մեջ, բնության հետ, հիմա հեռացել և հեռանում է իր բնավորության և խառնվածքի ձևարանից, և եթե գրականությունը կարոտ է, իսկ Մաթևոսյանի գրականությունը առավել ևս՝ հասկանալի, շատ հասկանալի են հեղինակի հրճվանքը արտույտով, առվակով, գայլով, աղվեսով, արտերով ու իր տեսակի շարունակության համար մոլեգնորեն հետևողական գոմեշով։ Գոմեշի կողքին, նրա կենդանական կենսունակության կողքին կա ծույլ ու անբան, իրենց տեսակի շարունակությունը ժխտող տղաների ու աղջիկների խումբը,— այս միջնասյան շուրջը Մաթևոսյանը ստեղծում է հայի հոգեբանության փայլուն դիմանկար, որն հետագայում նա ամբողջացրեց «Մեծամորում»։

ՄԵԾԱՄՈՐ: «Գարուն», 1969, № 10, էջ 10—29:

Ստեղծագործությունը մեր անցյալի և ներկայի առերեսումն է պատմական ստույգ փաստերի առկայությամբ։ Իսկ դրանք խոսում են այն մասին, որ հայերս մեր արվեստասիրությամբ և բանաստեղծական խառնվածքով հնուց ի վեր կորցնելով մեր ոտքերի տակի հողը՝ նվաճել ենք երկինք։ Դա մեր հպարտությունն ու դժբախտությունն է միաժամանակ։ Երկում քննադատվում է պատմական արժեքների գերագնահատությունը ի վնաս ներկայի. քրդի և հայի հոգեբանության զուգահեռով քննվում է մեր ժողովրդի քանակական փոքրության իրոք այժմեական հարցը։

ԽՈՒՄՀԱՐ: [Վիպակ]:—«Սովետ. գրականություն», Եր., 1970, № 9, էջ 12—68:

Վիպակի հերոսն իր մեջքի ետևում ունի հազար տարում մշակված նախնիների դառն փորձ, հիշողության մեջ ամուր նստվածք տված տխուր մանկություն, հազար տարիներում օրինականացված բարոյական անաղարտություն, և ահա այդ հերոսը, որ երկու երեխայի հայր է, ուսանում է մայրաքաղաքում։ Քաղաքն ուժեղ է, բայց թվում է՝ նա անզոր է դառն անցյալի և ընտանիքի մարդուն փոխել։ Մաթևոսյանը հանգիստ, թերևս մի քիչ դանդաղորեն, հերոսի ներաշխարհը լցնում է նոր կյանքի ձայներով, բույրերով։ Գևորգ Մնացականյանի վիճակը ծանր է. տեղի տա՞լ, թե՞ չտալ, հիշողությունններն ավելի սուր են դառնում. այդ հիշողություններին ավելանում է գյուղից ստացված ծանրոցը, նամակը, որոնք առավել ևս դժվարացնում են համակերպվել անհաճելի և միաժամանակ ձգող կյանքի հետ։ Հերոսը ներքուստ հավատարիմ է իր ընտանիքին, ապրելաձևի իր մշակած սկզբունքներին, բայց շրջապատը հաղթում է։ Գևորգ Մնացականյանը պարտվում է շրջապատի տված հնարավորություններին և պահի ստեղծած հարմարությանը։ Բայց նման կյանք վարել նա չէր կարող և, բնականաբար, գրողի հոգում արթնանում է մի անդիմադրելի կարոտ դեպի ծառը, գետը, տունը, մաքրությունը։

ՕԳՈՍՏՈՍ: Եր., «Հայաստան», 1967, 290 էջ:

Բովանդ.՝ Մենք ենք, մեր սարերը:—Աչքը:—Թախիծ:—Շները:—Միամիտ պատմություն:—Բենեձիեր: Օգոստոս:—Ալխո:—Կայարան:—Նժույգս:—Նարինջ զամբիկը:

ԱՀՆԻՋՈՐ: [Ակնարկ]:—«Սովետ. գրականություն», Եր., 1961, № 4, էջ 84—102:

ԱՅՍՊԵՍ կոչված գյուղագրության մասին: [Բանավեճ]:—«Գրական թերթ», Եր., 1968, 13 սեպտ., էջ 2, 4:

Ի՞ՆՉ կուզենար անել Վոլոդյա Մաթևոսյանը: [Ակնարկ]:—«Գրական թերթ», 1961, 14 ապրիլի, էջ 3:

ԼԵՌՆԵՐՍ թողեցի վերևում: [Պատմվածք]:—«Սովետ. գրականություն», Եր., 1962, № 8, էջ 70—74:

ԿՈՊԵԿ-կոպեկ միլիոն ռուբլի: Հատված «Մենք ենք, մեր սարերը» վիպակից:—«Գրական թերթ», Եր., 1963, 27 սեպտ., էջ 3—4:

ՀՈՎՍԵՓԸ վերադարձավ բանակից:—Թռուցիկ համբույր-

© National Library of Armenia

ներս... [Պատմվածքներ]։—«Սովետ. Հայաստան», Եր., 1962, № 2, էջ 13—16։

ՂՈՂԱՆՋ՝ համազարկի արձագանքով։ [Ակսել Բակունցի ծննդյան 70-ամյակի առթիվ]։—«Գրական թերթ», Եր., 1969, 20 հունիսի, էջ 2։

ՆԱՐԻՆՋ զամբիկը։ [Պատմվածք]։—«Գրական թերթ», Եր., 1964, 30 հոկտ., էջ 3—4։

ՈՉ մի օգուտ... [Արձակ]։—«Գրական թերթ», Եր., 1963, 11 հունվարի, էջ 1—2։

ՍՊԻՏԱԿ թղթի առջև։ [Արձակ]։—«Գրական թերթ», Եր., 1966, 14 հոկտ. էջ 2։

ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ։ [Ակնարկ]։—«Սովետ. գրականություն», Եր., 1959, № 7, էջ 32—42։

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ։ [Պատմվածք]։— «Սովետ. գրականություն», Եր., 1960, № 2, էջ 42—49։

ՕԳՈՍՏՈՍ։ [Պատմվածք]։—«Գրական թերթ», Եր., 1966, 16 սեպտ., էջ 2—4։

Նրա մասին

ԱՂԱԲԱԲՅԱՆ Ս. Հայ սովետական գրականություն։ Դասագիրք միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի համար։ [Նաև Հրանտ Մաթևոսյանի մասին]։ «Լույս», 1970, էջ 169։

ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ Ա. Արձակագրի աշխարհը դառնում է մերը։—«Սովետ. գրականություն», Եր., 1968, № 4, էջ 116—120։

ԲԻՏՈՎ Ա. Հովերգություն 20-րդ դար։—«Գրական թերթ», Եր., 1967, 30 հունիսի, էջ 3։

ԹԱԹԻԿՅԱՆ Շ. «Մենք ենք, մեր սարերը»։ [Կինոֆիլմի մասին]։—«Երեկոյան Երևան», 1970, 6 ապրիլի։

ԹԱՄՐԱԶՅԱՆ Հ. Իսկական գրողի ճանապարհը։ [Գրախոսություն «Օգոստոս» գրքի մասին]։—«Սովետական Հայաստան», Եր., 1968, 22 մարտի։

ԹՈՓՉՅԱՆ Ս. Ճանապարհ դեպի ծմակուտ,—«Գարուն», 1968, № 7, էջ 87—91։

ԹՈՓՉՅԱՆ Ս. Վերադարձ դեպի անձավները։ [Բանավեճ]։—«Գրական թերթ», 1969, 23 մայիսի, № 21, էջ 2—3։

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ Լ. Խոր հերկում։—«Ավանգարդ», Եր., 1967, 8 ապրիլի, էջ 2։

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ Լ. Հրանտ Մաթևոսյանի արձակը՝ ինչպես որ մեզ ներկայանում է։—«Գարուն», 1968, № 6, էջ 45—49։

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ. Գրական նոր սերնդի աշխարհը։ [Նաև՝ Հրանտ Մաթևոսյանի մասին]։—«Սովետական գրականություն», Եր., 1966, № 2, էջ 124։

ՀՈՎՍԵՓՅԱՆ Ռ. Ճշմարիտ կինոարվեստի ճանապարհին։ [«Մենք ենք, մեր սարերը» կինոֆիլմի մասին]։—«Գրական թերթ», Եր., 1970, 15 մայիսի, էջ 2։

ՄԱՀԱՐԻ Գ. «Ալխո»-ն։—«Գրական թերթ», Եր., 1966, 25 նոյեմբ., էջ 4։

ՄԱՆՈՒԿՅԱՆ Է. Մարդիկ՝ մեր սարերը։ [«Մենք ենք, մեր սարերը» կինոֆիլմի մասին]։—«Սովետական Հայաստան», 1970, 3 ապրիլի, էջ 4։

ՄԵԼՈՅԱՆ Ֆ. Բեռնաձիեր։ [Համանուն պատմվածքի մասին]։—«Գրական թերթ», Եր., 1968, 28 հունիսի։

ՊՈՂՈՍՅԱՆ Ռ. Համամիութենական էկրան։ [«Մենք ենք, մեր սարերը» կինոֆիլմի մասին]։—«Ավանգարդ», 1970, 24 հունվարի։

Литература

АЛХО.— (Буйволица. Новеллы. Перевод. Послесл. А. Битова. Илл.: Г. А. Мамян). Ереван, «Айастан», 1969. 84 с. с илл.

МЫ и наши горы. Авториз. пер. с арм. А. Баяндур. Послеслов С. Крутилин. М., «Молодая гвардия», 1967. 319 с.

© National Library of Armenia

То же. «Лит. Армения», 1965, № 6, с. 5—25, № 7, с. 5—23.

АВГУСТ. Рассказы: Август.— Алхо.— Оранжевый табун.— Месроп. (Авториз. пер. с арм.: А. Баяндур. Предисл. С. Крутилина).— Дружба народов, 1967, № 1, с. 19—66.

ЗОЛОТИСТАЯ. Рассказ. Пер. Э. Кананова.— Лит. Армения, 1964, № 12, с. 9—15.

МОИ горы остались наверху. Рассказ. Пер.: Э. Кананова.—«Лит. Армения», 1962, № 1, с. 11—16.

«МОИ устные поцелуи...» Маленькая новелла. Пер. с арм. А. Баяндур.— «Вокруг света», 1970, № 12, с. 27.

То же. «Лит. газета», 1968, 10 янв. с. 7.

Лит. Армения, 1962, № 11, с. 11—16.

Прикаспийск. коммунист. 1968, 13 июня.

МЫ и наши горы. Повесть. Пер.: А. Баяндур.—«Лит. Армения», 1965, № 6, с. 5—25, № 7, с. 5—23, № 8, с. 3—24.

НАШ род шутов-пересмешников. (Рассказ). Пер. с арм. Н. Гончар.—Лит. Армения, 1966, № 6, с. 26—41.

То же. Лит. Азербайджан, 1967, № 9, с. 38—55.

ОРАНЖЕВЫЙ табун. Рассказ. Пер. с арм. А. Баяндур.—Целиноградская правда. 1968, 25 июня.

О ПРИЗВАНИИ литературы. [По поводу статьи В. Петросяна. «Уравнение со многими неизвестными].—Лит. Армения, Ереван, 1968, № 11, с. 61—73.

О нем

БАБЛОЯН В. Раздумья о земле. [О повести Г. Матевосяна «Мы и наши горы].—«Дружба народов», 1966, № 7, с. 278—280.

БИТОВ А. Пастораль XX век.[Рец. на кн. Матевосян Г. «Мы и наши горы].— «Лит. Армения», 1967, 28 июня, с. 6.

МЕТЯШОВ И. Гнев, любовь и понимание. [О повести Гр. Матевосяна «Мы и наши горы»].— «Москва», 1968, № 1, с. 207—209.

СААКЯН Н. «Алхо». [Рец. на одноименную книгу].— «Гркери ашхар», 1970, 20 марта, с. 3.

РОЩИН М. Сага о селе Антарамеч. [О повести Гр. Матевосяна «Мы и наши горы»].—«Комсомольская правда», 1966, 15 янв. № 12, с. 3.

ТРЕФИЛОВА Г. Вместо идиллии. [О повести Г. Матевосяна «Мы и наши горы»].— «Лит. Армения», 1966, № 6, с. 84—87.

То же. Новый мир, 1966, № 3, с. 251—254.

© National Library of Armenia

Տեխ. խմբագիր՝ Հ. Մարտիրոսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Գևորգյան

ՎՖ 03353 Պատվեր 1154 Տիրաժ 1000

Տպագրական 1,25 մամուլ, հեղ. 0,9 մամ.

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի
պոլիգրաֆարդյունաբերության վարչության № 6 տպարան,
Երևան, Թումանյան փ. № 23/1։

© National Library of Armenia

© National Library of Armenia

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0122854

© National Library of Armenia

© National Library of Armenia